

եկեղեցիներն են որ միևնոյն օրը սրբագործուած են, ըստ ուղեգիր Ուխտաւորուհիին:

Գողգոթայի բլուրը իբր եկեղեցի չէր նկատուած. վասն զի ան գրուած էր մեծ անդաստակին մէկ անկիւնը, գուցէ Ներքող Կոստանդիանոսի անուն գրուածքին մէջ երեւնայ յիշատակարաններու երկուութիւն մը, անո՛ր համար որ Եւսեբիոս կը խօսի Փրկչին մատրան նուիրուած աղօթքի «աղօթքի տան», այսինքն «անկորնչելի յիշատակարանով մը զեղուն գերեզմանին», և Փրկչին Նշանին նուիրուած տաճարին, նոյն իսկ մահուան վրայ Փրկչին տարած յաղթանշանի (trophée) մասին: Ընդհանուր գրուածքին մէջ Նշան և Քրիստոսի յաղթանշան բառերը կը նշանակեն խաչը և հաւանաբար չարչարանաց ուրիշ գործիքներն, ինչպէս բեռները, որ կը յիշատակուին Ամբրոսիոսի օրերէն: Ուրեմն ներկի է եզրակացնել թէ սկիզբէն խիստ բնական բաժանում մը կատարուած էր կոստանդիանոսեան շինուածքներուն մէջ, այնպէս որ կարելի կ'ըլլար զատ զատ հաստատութիւններ նկատել Քրիստոսի Յարութեան և Անոր Չարչարանաց սրբավայրերը: Չորրորդ դարու վախճանին՝ Մարտոս ըսելով կը հասկցուէր չարչարանաց եւ մարտիրոսութեան նշանակութիւնը. վասն զի այս անունը կը տրուէր Գողգոթայի եկեղեցիին. մինչ Ս. Գերեզմանին բոլորաչէնը (rotonde) կը պահէր միայն Anastasisի տիտղոսը: Ուխտաւորուհիին իր Օրագրութեան մէջ մատրան յիշատակութեան առթիւ ըստ կամս, կ'աւելցնէ հետեւեալ բացատրութիւնը, որ շնորհաւորութեամբ կ'արեւն: Չ. դարէն վերջ հիմնադրին այս յիշատակը այնպէս մը կ'ամրանայ որ մատուոլին տիտղոսը կ'անյայտանայ Մայր եկեղեցի Կոստանդիանոսի, Ս. Կոստանդիանոս եկեղեցի անուններուն պատճառաւ: Ան կը կոչուի միևնոյն ժամանակ Գեորգիոս եկեղեցի: Ժամանակակից ուղեգիր ուխտաւոր մը կը գրէ. «Դուք կը մտնէք ա՛յն եկեղեցին, ուր զստուեցան երեք խաչերը որ հոն թաղուած էին»:

Հեղինակներ և ուղեգիրներ կ'ըսեն թէ մատրան մէջ զետեղուած էին խաչը, ինչպէս նաև Չարչարանաց միւս գործիքները՝ որ Ե. եւ Չ. դարերուն աւելցան միակ նուիրական մատուցին քով: Հաւանական չի թուիր որ ճշմարիտ խաչին մատուցը իսլամ երկու դահլիճին (exèdre) մէջ սովորական եղանակաւ մը պահուած ըլլայ: Այս եկեղեցիին մէջ Աւագ ուրբաթ օրը